«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2021

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Թումանյանի հայրենասիրությունը

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Գայանե Գրիգորյան

ՄԱՐԶ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նիգավանի միջնակարգդպրոց

Բովանդակություն

Ներածություն էջ 4

Դեռահասի տարիքային առանձնահատկությունները և ինքնագիտակցության կայացումը էջ 6

Թումանյանի հայրենսիրության և ապրած կյանքի օրինակով էջ 7
Թումանյանի հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցում էջ 18
Եզրակացություն էջ 20
օգտագործված գրականության էջ 21

Թումանյանի հայրենասիրությունը

Հմայիչ էր Հովհաննես Թումանյանը՝ որպես բանաստեղծ ու մարդ: Նա իր մեջ կրում էր ժողովրդի լավագույն գծերը...

Մ.Սարյան



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունը մարդկության պատմական զարգացման մեծագույն և վեհ հոգևոր ձեռբերումն է։Այն իմաստավորում է ազգային ինքնությունն ու ապրելու ձգտումը։Այն անձի ինքնահաստատման ձևերից կարևոր և համապարփակ գաղափար է, ինչպես՝ սերը, ազնվությունը,նվիրվածությունը, քաջությունը և այլն։

Եվ, եթե վերլուծելու լինենք, հայրենասիրության մեջ կարող ենք ներառել մարդկայնի մյուս բարձր չափանիշները։

Հայրենիքը լոկ աշխարհագրական տարածք չէ՝գետեր, լճեր, անտառներմ օգտակար հանածոներ, որոնք բարելավում են տվյալ տարածքում ապրող մարդկանց կյանքը կամ հաստատում իրենց դերը մյուս պետությունների հետ փոխհարաբերություններում։

Հայրենիքը իքնաճանաչման, ինքնահաստատման վայր է, ապահովություն է, վստահություն, անհատականությունը ապահովող իրականություն, եղելության իմաստ, ապրելու իրավունք, գոյատևելու և ժամանակի հարատևությանը դիմակայելու ձև, որով թևեր ես առնում ու սավառնում տասնամյակներ, հարյուրամյակներ, հազարամյակներ։

Աշակերտին, որպես հասարակության անդամ, կայացման համար մեջ գործընթաց է հայրենասիրության ճշգրիտ դաստիրակության ամրապնդումը։

Հայենասիրությունը երեխայի մեջ ձևավորվում է դեռ շատ փոքրուց ։Այն կախված է միջավայրից, այդ միջավայրում տիրող հանգամանքներից, ճիշտ մոտեցումից, տրամադրվածությունից, անձի հանդեպ հարգանքից, անհատի ըմբռնողականությունից և կատարած քայլերից։

Նպատակները

Դեռահասների մեջ ամրապնդել հայրենասիրությունը։ Ձևավորել գնահատանք հայրենի բնության, հայ մեծերի, նրնաց կատարած հայրենանվեր գործերի հանդեպ։Մղել նրանց հայրենանվեր գործի։

1.Դեռահասի տարիքային առանձնահատկությունները

/դեռահասային տարիք 11-12/ 14-16

Դիտարկենք դեռահասության տարիքի առանձնահատկությունները։

Այս տարիքի երեխան զարգացման համար անցնում է երկար ճանապարհ, որ դրսեվորվում է թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական, թե՛ հուզական համակարգերում։

Ինչպես առանձնացնում է Վ. Ստոլինը, կա դեռահասի ինքնագիտակցության ձևավորման մի քանի աղբյուրներ, որոնք տարբեր ազդեցություն և կշիռ են ունենում անձի ձևավորմանը՝ այս շրջանում ևս, դրանցից են՝ ուրիշի գնահատականները, ընկերների շրջապատը, հարմարվելը ուրիշների հետ, իրական և իդեալական《Ես》-երի համեմատումը, իր գործունեության արդյունքների վերլուծությունը և այլն։

ա.Դեռահասի ինքնագիտակցության կայացումը

Դեռահասի ինքնագիտակցության կայացման ամենակարևոր փուլը համարվում է խոսքի ձևավորումը, վարքի ինքնաղեկավարումը։

Նրանց ինքնահարգանքի մակարդակը հնարավոր չէ բացահայտել միայն սոցիալական վիճակով կամ ուսման առաջընթացով։Պետք է դեռահասին դարձնել այն միջավայրի անդամը, որը պետք է ձևավորի նրա դաստիրակությունը։

Նպատակ է դրվում, ելնելով նրա տարիքային առանձնահատկություններից, ուսումնական միջավայր ստեղծել ցայտուն օրինակներով ու պատկերավոր կերպարներով, հեղինակությունների գործունեության օրինակով ու

ստեղծագործությունների ուսումնասիրությամբ։

Դրանով էլ ձևավորում ենք և ամրապնդում դեռահասի հայրենասիրական դաստիրակությունը ։

1. Թումանյանի ապրած կյանքի օրինակով

Ամենայն հայոց բանաստեղծ...
Այսպես ենք մենք ճանաչում և գնահատում մեր ազգի մեծագույն զավակներից մեկին: Հայրենասիրական դաստիրակության լավագույն օրինակ են ոչ միայն նրա ստեղծագորլությունները, այլև նրա ապրած կյաբքն ու կատարած գործերը:

ա.Թումանյանի հայրենասիրության օրինակով

Այդ րոպեին նա ինձ թվում էր մի տիտան, որին տված է ամենադժվար հյուսվածքներ կազմել լեռնային ամեն տեսակ հմայքներից, մի կախարդ, որին մնում է մի գրիչ առնել ձեռքը, և ահա ամեն ինչ-ամպ ու մշուշ, արև ու հեղեղ, երկինք ու ծաղիկ, գազան ու ջրվեժ այնպես կլինեն, ինչպես նա է ուզում: Եվ թվում էր, թե Լոռու հսկաներն ամեն կողմից՝ և՛ Դվալը, և՛ Լալվարը, և՛ ուրշ հարյուր ու մի գագաթներ այս միևնույնն էին ասում մռայլ ժպիտներ հագած...

ԼԵՌ

Հայ մեծ բանաստեղծ Հովի. Թումանյանը մեծ հայենասեր է:Նրա համար հայենի ամեն թուփ ու ծառ, սար ու ձոր, առու և գետ, ինչպես նաև մանուկ, երիտասարդ ու ծեր հայրենիքի մի մասն են և ամփոփում ու ամբողջացնում են այդ վեհ գաղափարը: Թումանյանը ապրում էր հայրենի հոգսերով և իր էության ամեն մի կաթիլ հայրենիքին էր համարում:
Ելնելով այս ամենից՝ուսուցման գործընթացի համար ընտրել եմ Թումանյանի կյանքի, գործունեության և ստեղծագործությունների ուսուցումը դեռահասի մեջ ձևավորելու և զարգացնելու

հայրենասիրությունը՝ մղելով նրան գործելու՝ հայրենիքի համար օգտակար գործունեություն ծավալելով, որն էլ խթան կհանդիսանա սեփական անձի և միջավայրի կերտմանը։

բ.Թումանյանը և հայրենի բնությունը

Թումանյանի բնությունը յուրօրինակ է։ Այն կենդանի է՝ապրում է, շնչում, կիսում սեփական ժողովրդի ապրումները, դառնում նրա սփոփողն ու ընկերը, դրա համար էլ մարդը նրան է պատմում իր ապրումներն ու խոհերը, և դառնում բնության ներդաշնակ մասնիկը՝գլխավորը, տերը, սիրողն ու պահպանողը։

— Բարձրը սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր....

/Հովհաննես Թումանյան, լիակատար երկերի ժողովածու, 《Անուշ》էջ 185/

Թումանյանի բնությունը հայրենիքի մի մասն է։
Հայրենիք է նաև հարազատ ծննդավայրը։Բնության ամեն թուփ ու քար հարազատ է՝ օգտակար։
Կարելի է հայրենի դեղաբույսերը ճանաչել, նշել նրանց օգտակար հատկությունները և խորհրդավոր պատմությունները կապված նրանց հետ։
Պետք է նկատել նաև զուլալ գետակի խաճերը, որոնց վրա ոտաբոբիկ քայլելիս զգում ես հոգու հանգստություն և թեթևություն, իսկ ջրի խոխոջունը հանգստացնում է նյարդային համակարգը։
Բնությունը աշակերտը ընկալում է որպես կենդանի, հարազատ, ապահով ընկեր։
Եվ նրանց սիրելն ու պահպանելը դարձնում է հայրռնանվեր գործ։

գ.Բնությունը մարդուն ուսուցանող

Թումանյանի մանկական գրվածքները աչքի են ընկնում ճանաչողական, կասեի գիտական առատ նյութով։Չափազանցություն չէր լինի, եթե ասենք, որ տարվա եղանակների, բնության երևույթների, կենդանիների, թռչունների, բույսերի մասին գրված նրա գեղարվեստական լիարժեք ստեղծագործություններից մանուկ ու պատանի, ավելի շատ գիտելիքներ են ստանում քան դասագրքերում զետեղված մասնագիտական որոշ նյութերից։

/Մ. Մելքումյան Թումանյանը կրթության և դաստիարակության մասին《 Լույս》 Երևան 1969թ. էջ 125/

Ինչպես《Ծաղիկներ երգը》ստեղծագործության մեջ ծաղիկները, արևը, գարունը և ծղրիդը իրար ընկերներ են, այնպես էլ իրար ընկերներ են դառնում նույն գյուղում ապրող, սոցիալական տարբեր խավերի պատկանող երեխաները։

Մի խումբ ընկեր երեխաներ էինք։ Գյուղացի երեխաներ։Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք, ի՜նչքան էինք խաղում։ Ու ո՜նց էինք իրար սիրում, ո՜նց էինք իրար սովորել...

/Հովհաննես Թումանյան, լիակատար երկերի ժողովածու, էջ 330/

Սովորողները ծանոթանալով Թումանյանի բնաշխարհին՝ կկարողանան համեմատել և գնահատել սեփական ծննդավայրի բնության առանձնահատկությունները և կապը սեփական ներաշխարհի հետ։ Ուսումնասիրելով Թումանյանի կենսագրական դրվագները կապված հայրենի բնության հետ՝ սովորողները նաև կարող են ստեղծել իրենց հայրենի բնաշխարհի պատկերները գործնական աշխատանքների միջոցով(պաստառներ, շարադրություն)։

Կարելի է կազմակերպել արշավ դեպի ծննդավայրի բնությունը, որն էլ

կբացահայտի հարազատ բնության գաղտնիքները, նրա պահպանության կարևորությունն ու գեղեցկությունը:

Բնությունը դարձնելով հարազատ ու սիրելի՝ կկարողանանք ձևավորել հայրենասիրության ևս մեկ բնագավառ, որն էլ սովորողին կմղի սիրել և պահպանել այն:

դ.Թումանյանի մարդասիրությունը

Հայրենիքի մեծագույն արժեքը Թումանյանի համար հայ մարդն էր, հայ մանուկը: Իզուր չէ, որ նրան անվանում էին որբերի հայր:

1.Գաղթական փոքրիկներին որբանոցներում տեղավորելուց բացի Թումանյանն ու մանկատների աշխատակիցներն ակտիվորեն զբաղվում էին նաեւ որբերի որդեգրման հարցերով:
2.Հուսահատ Թումանյանը հավաքում է իր ունեցած վերջին դրամը, տալիս սայլապանին, որպեսզի հանկարծ մեռելներն անթաղ չմնան: Այդ նույն ընթացքում Գեւորգյան ճեմարանից դուրս էին թողնում Թումանյանի որդուն՝ վարձը չվճարելու պատճառով: Թումանյանը

դարձել էր արդեն «Ամենայն Հայոց հայերի Հայրիկ»-ը՝ իր վրա վերցնելով մի ողջ որբացած ժողովրդի հոգս:
3.Թումանյանը հոգ էր տանում ոչ միայն որբերի, այլեւ յուրաքանչյուրի մասին, ով իրեն շրջապատում էր: Այդքան ցավերի, հոգսերի մեջ գտնվող բանաստեղծը անհանգստանում, հետեւում էր, որպեսզի հանկարծ գթության քույրերը քաղցած չմնան:

4. Թումանյանը «Հայ գրողների կովկասյան միության» նախագահն էր եւ, դեմ գնալով միության սահմանադրությանն ու վարչության անդամներին, ստիպեց, որպեսզի միությունը որդեգրի երեք շնորհալի երիտասարդների՝ Միհրան Թութունջյանին, Նորայր Դաբաղյանին եւ Վաղարշակ Նորենցին:

/https://mkrtich.home.blog/2020/02/04/%D5%B0-%D5%A9%D5%B8%D6%82%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8%D5%9D-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80/

Ե.Աշակերտի անհատական աշխատանք

Աշակերտին անհատական աշխատանք հանձնարարելիս կարելի է առաջարկել տալ տեղեկություններ Թումանյանի գործունեության կարևոր դեպքերից, որոնք, ըստ աշակերտի կարծիքի, ընդգծում են գրողի հայրենասիրական գործունեությունը:

Թումանյանի մուտքը գրական-հասարակական ասպարեզ զուգադիպեց Արևմտյան
Հայաստանում
սկսված

ազատագրական շարժումների նոր զարթոնքին, որը խորը ազդեցություն էր թողել Թիֆլիսի հայ առաջադեմ երիտասարդության վրա։《Հայկական հարց》-ի դրական լուծման հեռանկարով էր ապրում ժողովրդի փրկության հույսերով խանդավառված երիտասարդությունը:

1905-1906թթ.	Հասարակական գործունեության ժամանակաշրջան:	

1893թ.	Օգոստոսի29-ին բանաստեղծը այցելում է Խրիմյան Հայրիկին։	
1895թ.	Հայկական կոտորածներից հետո, որպես «Հանգանակող և գործադրող կոմիտեի»անդամ, Թումանյանը հանձնարարություն է ստանում ստեղծելու գաղթականությանն օգնող գավառական տեղական կոմիտեներ։	
1905-1906թթ.	Բանաստեղծը իր ամբողջ էությամբ նվիրված էր ժողովրդի ինքնապաշտպանության և հայ-թուրքական խաղաղություն ստեղծելու գործին։	

Տրված աղյուսակում առանձնացված են Հովհ. Թումանյանի հասարակական գործունեության մի քանի դրվագներ, որոնց թիվը կարելի է շարունակել տանը պրպտումներ կատարելով՝ այդ մասին նախապես հանձարարություններ տալով։

զ.Թումանյանը և հայ գրողները

Հայրենիքը հարատև է իր զավակներով։ Սերունդներ, որոնք պահել, պահպանել, շենացրել ու աշխարհին են ներկայացրել Հայաստանը։

Կարելի է նույն ժամանակաշրջանում ստեղծագործող հայրենսիրական երկերի հեղինակների գործունեության և ստեղծագործությունների համեմատությամբ, ստեղծել ալբոմ, որտեղ կզետեղվեն հայրենասիրական գործեր և ստեղծագործություններ։Օրինակ՝ Մ. Նալբանդյանի «Ազատություն»-ը Պ.Դուրյանի «Իմ ցավը»-ը, Վ. Տերյանի «Երկիր Նաիրի»շարքը, Հ. Շիրազի «Իմ սուրբ հայրենիք»և այլն։

— Ազատությո՛ւն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,

Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար. ազատությո՛ւն։

Մ. Նալբանդյան «Ազատություն»

Հեգ մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Չ՚օգնած անոր՝ մեռնի՚լ աննշան,
Ո՛հ, ա՛յս, է սոսկ ցավ ինձ համար։

Պ. Դուրյան «Իմ ցավը»

Ես ամբողջովին քոնն եմ, հայրենիք,
Եվ մոմի նման, ճամփեքիդ վրա
Քո փառքի համար թե մի օր վառվեմ,
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա։

Հ. Շիրազ «Իմ սուրբ հայրենիք»

Աշակերտները կուսումնասիրեն Հովհ.Թումանյանի ժամանակաշրջանը, ապա կհամեմատեն մեր օրերի հետ: Բացահայտելով հայրենանվեր գործիչների գործունեությունը՝կկազմեն համեմատական աղյուսակներ:

Աշխատանքի ընթացքում նրանք կբացահայտեն այն անձանց և այն գործերը, որոնք կապված են Հովհ. Թումանյանի գործունեության հետ: Սովորողները կկարողանան ներկայացնել իրենց աշխատանքները սահիկների կամ պաստառների միջոցով այս գործընթացը կոգնի սովորողին ճիշտ գնահատել գրողի գործունեությունը՝կապված հայրենասիրության հետ, և կմղի նրան սեփական արարքներով և գործերով հայրենասիրական գործունեություն ծավալող

Բանաստեղծի մտահոգությունների շարքում էր նաև հայ գրողների և հայ գրականության ապագան:1899թվականին սեփական տանը, Թումանյանը հիմնում է《Վերնատուն》խմբակը:

«Վերնատունը» յուրահատուկ դպրոց է եղել թիֆլիսահայ գրասեր հասարակայնության համար: Գործունեության տարիներին մեկը մյուսին գերազանցող գրական գլուխգործոցներ են ծնվել: «Վերնատունը» դարձել է «Հայ գրողների կովկասյան ընկերության» հիմնադրման հիմնական նախադրյալ, որը պետական գրանցում ունեցող գրական առաջին կազմակերպությունն էր և ուներ իր Կանոնադրությունը:

https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://hy.m.wikipedia.org/wiki/%25D5%258E%25D5%25A5%25D6%2580%25D5%25B6%25D5%25A1%25D5%25BF%25D5%25B8%25D6%2582%25D5%25B6&ved=2ahUKEwi1g6nAkMH5AhVDQ_EDHRxkBcUQFnoECAoQAQ&usg=AOvVaw19VdRb1VHeA9Zpl3RxARP5

Իսկ 1903թվականի մարտին հիմնվում է《Կովկասյան ընկերությունների միութեան կոմիտեն》

Գրողի նյութական անապահովությունը համարում էր գերագույն չարիք հայ գրականության զարգացման համար: Թումանյանը առաջնորդվում էր այն գաղափարով, որ և՛գրականությունը, և՛ գրողը ազգային պաշտպանվածության և հոգածության կարիք ունեն: Եվ նա ժամանակ, ջանք ու եռանդ չէր խնայում ընկերության գործունեության միջոցով լուծումներ տալու դրանց:

https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=http://www.toumanian.am/arm/museum/scientific-part/tumanyan-groghneri-kovkasyan-ynkerutyun&ved=2ahUKEwiUxP6DmMH5AhU6XfEDHeDeD5IQFnoECAgQAQ&usg=AOvVaw0ojvF8-2-Ww1d2K--mamuy

9

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
էն անլույս մըթնում
Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում....

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թե ե՞րբ կըբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում։

3.Թումանյանի հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցում

Թումանյանի կյանքի և գործունեության հայրենասիրական կարևոր դրվագների ուսուցումից և ամփոփումից հետո կարելի է անցնել , նրա հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցմանը՝ նպատակ ունենալով ամրապնդել ձեռք բերված արժեքային համակարգը։

Կարելի է նաև գրողի ստեղծագործությունների և հայ ժողովրդի կյանքում առկա ժամանակի խնդիրների համեմատում, պատճառահետևանքային կապի վեր հանում։

Օրինակ՝1900-ականների սկզբում հայ ժողովուրդի տնտեսական ու պետական գործունեության խղճալի վիճակը հանգեցրել էր ժողովրդի սոցիալ-հեգեբանական ծանր վիճակի առկայությանը։

Պետականության բացակայությունը անորոշության ու տագնապի մեջ էր պահում հայ ժողովրդին։

Խմբային աշխատանքների միջոցով կարելի է գտնռլ Թումանյանի հայրենասիրական ստեղծագործությունները ընդհանրացնոց գաղափարը։ Գտնել բանալի բառերը։

Համեմատեկ մյուս գրողների նույն թեմայով ստեղծագործությունների հետ։

Կարելի է նաև օտարազգի նշանավոր մարդկանց մտքերն ու ստեղծագործությունները հայ ժողովրդի մասին հավաքել մեկ ալբոմի մեջ, որը կգործածվի մյուս հեղինակների կյանքն ու ստեղծագործությունները ուսումնասիրելիս։

Ունենալով Թումանյանի օրինակը, համեմատելով մյուս հայ գրողների նմանատիպ գործունեության հետ։Կարող ենք ընդհանուր հետևություն անել հայրենասիրության գաղափարի մասին։

Կարելի է ունեցած պաշարըհամեմատել մերօրյա իրավիճակների հետ, տալ սեփական գնահատականը։

Սովորողի մեջ ձևավորված արժեհամակարգը կարելի է իմի բերել անհատական աշխատանքի միջոցով։Գրել շարադրություն 《Հայը, Հայաստանը և ես》 վերնագրով։

Ինչպես նաև կարելի է ստեղծռլ հայրենասերների անկյուն, որտեղ կնդգրկվեն հայ մեծերի (գրողների, արվեստագետների, մարզիկների) նկարները։

Նկարների տակ փակցնելով նրանց հայրենանվեր գործերի և ձեռքբերումների մասին պատմող պաստառներ։

Եզրակացություն

Ընտրելով այս թեման՝ մեր առջև խնդիր դրեցինք դեռահաս տարիքի երեխայի կրթության և դաստիրակության հարցում օգտագործել գրականության դասին ընձեռնած հնարավորություններից, որոնք ի թիվս այլ արժեքների կձևավորեն և կամրապնդեն դեռահասի հայրենասիրական արժեքները

Հաշվի առնելով դեռահասի հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, որոնց մասին հակիրճ տեղեկություններ ենք տվել մենք ընտրեցինք Թումանյանի հայրենասիրության օրինակը, քանի որ հայոց մեծ բանաստեղծի կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունները դասական և արդիական օրինակներ են անձի ձևավորման և արժեքների ստեղծման գործում։

1.Մենք ընտրեցինք Թումանյանի կյանքը, որովհետև այն լի է հայրենանվեր գործերով։

2. Ընտրեցինք Թումանյանի գործունեությունը, որովհետև այն օգնել է և խթան հանդիսացել մյուս հայրենասեր անձաց գոծունեությանը։

3. Ընտրեցինք Թումանյանի ստեղծագործությունները, քանի որ դրանք հոգեհարազատ են, ոգևորող, ճշմարտացի են արտացոլում հայ ժողովրդի ինքնությունը։

Ցանկացանք՝ փորձնական դասի միջոցով ցույց տալ մեր հետազոտության արդյունքները։Մեզ թվում է՝դա մեզ հաջողվեց։

16.Օգտագործված գրականության ցանկ

1.Հովհաննես Թումանյանի լիակատար երկերի ժողովածու

2. Մ. Մելքումյանի《Թումանյանի կյանքն ու գործունեությունը》,《Լույս》Երևան 1969թ.

3. https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://hy.m.wikipedia.org/wiki/%25D5%258E%25D5%25A5%25D6%2580%25D5%25B6%25D5%25A1%25D5%25BF%25D5%25B8%25D6%2582%25D5%25B6_(%25D5%25B6%25D5%25AF%25D5%25A1%25D6%2580)&ved=2ahUKEwj7wIbs8sP5AhUzQfEDHdWrBeQQFnoECDsQAQ&usg=AOvVaw0dofNydmC5ELN_nzfAot79

4. https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=http://www.toumanian.am/arm/museum/scientific-part/tumanyan-groghneri-kovkasyan-ynkerutyun&ved=2ahUKEwi9gaCE88P5AhWrQfEDHQJcA7IQFnoECAcQAQ&usg=AOvVaw0ojvF8-2-Ww1d2K--mamuy

5. https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://mediamax.am/am/news/society/27235/&ved=2ahUKEwiEgtqV88P5AhW8XvEDHZKvAKgQFnoECAwQAQ&usg=AOvVaw2fXZlCGDc5GahPHHAFvqTk